

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀԻԾԱՏԱԿԻՆ

(24 ապրիլի 1981 թ., Վիեննա)

Այսօր, 24 ապրիլ, օր հիշատակի բյուրավոր նահատակաց մերոց:

Այսօր, Ես կու գամ ձեզի Սուրբ գրական Հայաստանեն և սրբազնասուրբ Էջմիածնեն բերելու բոլորիդ ողջույնը մայր հայրենիքին և մխիթարիչ օրհնությունը Աստուծոյ:

Այսօր ձեզի կու գամ, Իմ գիտակցության լույսի մեջ վառ պահած կախարդող պատկերը Երևանի Ծիծեռնակաբերդին, այն բարձունքին, ուրկե այսօր շարան-շարան կբարձրանան հայաստանցի ձեր բույրերն ու եղբայրները, կանուխ առավոտեն մինչև ուշ գիշեր, հարյուր հազարավոր հայեր՝ ծերեր ու երիտասարդներ, բանվորներ ու հող մշակողներ, գիտության և արվեստի աշխատողներ, հայրենի պետության ղեկավարներ ու պաշտոնակատարներ, համալսարանի դասախոսներ, ուսանողներ և դպրոցական աշակերտներ, բոլորը, բոլորը ոգեշնչված միևնույն սրբազան ապրումներով, խոնարհելու 1915 սև թվականի մեծ Եղեռնի երկու միլիոն զոհերու հիշատակին առջև, ուխտելու հավատարիմ մնալ անոնց նվիրական պատգամին:

Ծիծեռնակաբերդը, այն Թաբոր լեռն է մեր ազգին, մանավանդ հայաստանցիներուն, ուր բոլոր հայերը առանց խտրության, հոգևին կմիաձուլվին, կպայծառակերպվին, կթոթափեն իրենց վրայեն ամեն տեսակի տարբերություններ, հեռավորություններ: Այստեղ բոլորի սրտերը կտրոփեն նույն զարկով, բոլորը կդառնան մեկ մարմին, մեկ կամք, մեկ ճակատագիր:

Կբարձրանան հայերը Ծիծեռնակաբերդն ի վեր, խիտ շարքերով՝ լուռ, ինքնամփոփ, ինքնամոռաց, առանց շատախոսության, առանց ցուցադրական դրսևորումներու, առանց անհավասարակշիռ արարքներու: Հայ հոգին է որ հեղեղի պես կհոսի անվերջ, համաչափ, կարգապահ: Ամեն ինչ բնական է ու հարազատ, ամեն ինչ անկեղծ է ու անարատ: Բոլորը կբալեն կողք-կողքի, եղբայրացած, իբրև հին-հին ծանոթներ, մտերիմներ—Հայկ Նահապետի օրերեն ի վեր, մեկը մյուսին հավատարիմ ուղեկիցներ, մեկը մյուսին հնազանդ զինվորյալներ:

Եվ կբալեն հայերը ինքնավստահ ու լավատես, վերանորոգելով նաև իրենց ուխտը հայրենաշեն ստեղծարար աշխատանքի, ամեն օր, ամեն ժամ

ա՛լ ավելի շեն և ա՛լ ավելի ծաղկյալ դարձնելու համար արյան, հեղեղներու գինով ձեռք բերված այսօրվան մայր երկիրը Հայոց, որ իրականացած երազն է մեր անթիվ անհամար զոհված սերունդներուն, և ամենափառավոր հուշարձանը՝ նվիրված անոնց սուրբ հիշատակին:

Ծիծեռնակաբերդ կբարձրանան հայաստանցիները պայծառ գիտակցությամբը իրենց վերածնած հայրենիքի հիմնական ու մնայուն շահերուն: Անոնք չեն շփոթիր, անոնք չեն տարուբերիր մեր օրերու միջազգային պեկոծումներեն և վերիվայրումներեն: Անոնք բոլորը զրահված են իրենց մայր հողի, իրենց կյանքի, իրենց զավակներու ապագայի անվտանգության ու ապահովության գիտակցությամբ: Անոնք, հայաստանցի ձեր եղբայրներն ու քույրերը, բոլորը, ամեն բանե առաջ և ամեն բանե վեր, կկամենան պահպանումը աշխարհի խաղաղության և համերաշխ գոյակցությունը պետություններու: Այո՛, հայաստանցի հայ մարդու գերագույն իղձն ու կամեցողությունն է՝ իր վերածնած երկրի սահմաններուն վրա տեսնել պահպանումը խաղաղության և ապահովության: Ես կխորհիմ թե այս իսկ է այժմու պատգամը մեր նահատակներուն, պատգամ ուղղված համայն հայության, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի:

Ուրեմն, սփյուռքի հորիզոններու վրա պանդուխտ զավակներ Մեր, եթե այսօր, օր նահատակաց սուրբ հիշատակի, ձեր Հայրապետեն պատգամ մը, հորդոր մը կսպասեք, Ես պիտի կամենայի հրավիրել ձեզ, որ հոգվով ու սրտով միանաք ձեր հայաստանցի քույրերուն և եղբայրներուն հետ, աղոթելու նախ մեր ազգի անմեղ զոհերու հոգիներուն համար, հայոց վերածնած հայրենիքի հարատև վերաշինության ու ծաղկումին համար և մանավանդ անոր անվտանգության և աշխարհի խաղաղության համար:

Մենք, իբրև ազգություն և պետություն, մեր ճակատագիրը, մեր գոյատևումը և մեր արդար երազանքներու իրականացումը կրնանք ապահովել միմիայն աշխարհի խաղաղության պայմաններու մեջ, միմիայն պետություններու համերաշխ գոյակցության և գործակցության իրավիճակով:

Մեր աշխարհեն, մեր երկրի սահմաններեն, Տե՛ր Աստված հեռո՛ւ պահե ընդմիշտ ամեն տեսակ պատերազմ, ամեն տեսակ արհավիրք:

Այո՛, Իմ հրավերն է և Իմ սպասումը, որ նաև սփյուռքի հայությունը այս պայծառ գիտակցությամբ լուսաորե իր մտորումներն ու իր ձեռաց գործերը, առանց մոլորելու, առանց երկմտելու, առանց անհեռատես ու անհավատարակշիռ արարքներ գործելու, որոնք կրնան վտանգել արտասահմանի հայ համայնքներու այս կամ այն հատվածը:

«Իմաստութիւն շինեաց իւր տուն, և կանգնեաց սիւնս եօթն: ....Խնդրիցէք զիմաստութիւն զի ապրեսջիք և ուղղիցէք գիտութեամբ զհանճար, և ուղիղ ճանապարհաւ իմացարուք զխրատ» (Առակք Սողոմոնի Թ 1—6):

Օրհնությո՛ւն և հավերժ լու՛յս բյուրավոր նահատակաց ազգիս հայոց, որք կատարեցան վասն Հիսուսի և վասն հայրենեյաց:

Օրհնությո՛ւն և փա՛ռք վերածնած երկրին մեր հայրենի:

«Երանի՜ խաղաղարարաց զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին»: Ամեն:

ԷՋՄԻԱԾԻՆ